

ԽՆՉՈՐԵՆՈՒ ԵՎ ՏԱՆՉԵՆՈՒ ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐ ՍՈՐՏԵՐԻ
ԱԳՐՈԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՈԽՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿՈՒՄ

Մոտակա տարիներում պտուղների և հատապտուղների արտադրության ընդարձակումը և տարածությունների ավելացումը հնարավորություն կտա բավարարելու ազգարնակշության աճող պահանջմունքները, տարվա մեծ մասը նրանց ապահովելու թարմ պտուղներով։ Դրան կարելի է հասնել գոյություն ունեցող այգիների բերքատվությունը բարձրացնելու և նոր այգիներ հիմնելու միջոցով։

Բերքատվությունը բարձրացնելու և բարձրորակ պտուղներ ստանալու համար անհրաժեշտ է նոր հիմնվող այգիներում տնկել տվյալ գոտու հողակիմայական պայմաններին հարմարված լավագույն սորտեր։ Հայաստանի լեռնային շրջաններում (որտեղ նախկինում պտղաբուծություն համարյա գոյություն չի ունեցել) պտղաբուծությունը գտնվում է զարգացման բուռն շրջանում և քանի որ եղած տնկարկների սորտային կազմը այնքան էլ հարուստ չէ, ապա անհրաժեշտ է այն լրացնել նոր լավագույն սորտերով։ Սորտերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս գոյություն ունեցող բազմաթիվ և սելեկցիոն հանապարհով ստեղծված նոր սորտերից ընտրել լավագույնները և այն տարածել արտադրության մեջ։

Ուսումնասիրությունները կատարվել են խնձորենու և տանձենու ժողովրդական ու ժամանակակից սելեկցիայի մի քանի սորտերի վրա, կենինականի բարձրավանդակի պայմաններում, ընդորում տանձենու սորտերը գտնվել են բերքատվության սկզբնական շրջանում, իսկ խնձորենու սորտերը՝ լրիվ ապրանքային բերքատվության մեջ։

ԹԵՐՖԻ ուրակական ցուցանիշները և ապրանքայնությունը

Պտղի հասունացման ժամկետը սորտի գլխավոր առանձնահատկություններից մեկն է, որը որոշ շափով պայմանավորում է նրա տարածումը և օգտագործման բնույթը։ Ուստի սորտերի ուսումնասիրության և նկարագրության ժամանակ նշելով դրանց տնտեսական արժեքավոր հատկությունները, մեծ ուշադրություն է դարձվում այդ հատկանիշի վրա։

Պտղի հասունացման ժամկետները պայմանավորված են ոչ միայն սորտի առանձնահատկություններով, այլև նրա աճման միջավայրի պայմաններով։ Հատկապես մեծ է կլիմայի դերը։ Սորտերը հյուսիսից հարավ տեղափոխելիս պտղի հասունացումը տեղի է ունենում ավելի վաղ ժամկետում։

Լենինականի բարձրավանդակի պայմաններում, ըստ պտղի հասունացման ժամկետների, ուսումնասիրվող խնձորենու և տանձենու սորտերը խմբավորվում են հետեւյալ կերպ։

Խնձորենի

- | | |
|-----------------|---|
| 1. Վաղ ամառային | — Աստրախանի կարմիր: |
| 2. Ամառային | — Պապիրովկա, Տիտովկա, Արկադմեռային: |
| 3. Աշնանային | — Ռեբրիստոյե, Ռենետ Ռեշետնիկովի, Օլեգ, Ֆլավա: |
| 4. Զմեռային | — Պեպին. Զերնենկո, Բիսմարկ, Բաբուշկինո, Կալվիլ անիսի: |

Տանձենի

- | | |
|------------------|--|
| 1. Ամառային | — Սուխումի դյուշես, Կղզլ-արմուդ, Ջիր-նադրի, Բեսսեմյանկա: |
| 2. Աշնանային | — Լեռնային գեղեցկուհի, Միշուրինի հիշատակին, Բերե Ամանլի, Անտառային գեղեցկուհի, Մալաշա: |
| 3. Ուշ աշնանային | — Հեղինե, Լենինականի ուշահատ: |
| 4. Զմեռային | — Միշուրինի Բերե ձմեռային, Կյուրդուկի: |

ԹԵՐՖԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, Դա կենսաբանական և տնտեսական գըլխավոր հատկություններից մեկն է, որի ցուցանիշով տրվում է սորտի արտադրական գնահատականը։

Տարբեր սորտերից ստացված բերքը համեմատելու համար վերցվել է յուրաքանչյուր սորտի 3 ժամից ստացված բերքը։ 1963

թվականին, խիստ անբարենպաստ կլիմայական պայմանների պատճառով, ուսումնասիրվող խնձորենու և տանձենու սորտերի մի մասից բերք շատացվեց և այն սորտերից, որոնք պտղաբերեցին, ստացվեց շատ ցածր բերք:

Բերքի հաշվառման տվյալները բերվում են աղյուսակ 1 և 1առում:

Պտղուղների որակական ցուցանիշները որոշելու համար ընտրված երեք ծառից վերցվել է նմուշ, յուրաքանչյուրից 100 պտղուղ: Յուրաքանչյուր նմուշում որոշվել է. միջին, 10 խոշոր և մենամեծ պտղուղների կշիռները, ինչպես նաև ստանդարտ պտղուղների քանակը:

Հստ ստանդարտ պտղուղների քանակի խնձորենու սորտերը կորելի է խմբավորել հետևյալ ձևով:

1-ին խումբ՝ 50% -ից ցածր	— Տիտովկա, Կալվիլ անիսի:
2-րդ խումբ՝ 50—60%	— Պապիրովկա, Ֆլավա, Ռեբրիստոն, Օլեգ, Բարուշկինու:
3-րդ խումբ՝ 60—70%	— Աստրախանի կարմիր, Պեպին Չերնենկո, Արկադ Ճմեռային:
4-րդ խումբ՝ 70—80%	— Բիսմարկ, Ռենետ Ռեշետնիկովի:

Հստ պտղի մեծության՝

Միջինից ցածր՝ 50—75 գ	— Արկադ Ճմեռային, Ռենետ Ռեշետնիկովի, Պապիրովկա, Աստրախանի կարմիր, Ֆլավա, Բարուշկինու:
Միջին՝ 75—100 գ	— Տիտովկա, Ռեբրիստոն, Պեպին Չերնենկո, Կալվիլ անիսի, Օլեգ, Բիսմարկ:

Տանձենու սորտերը ըստ ստանդարտ պտղուղների քանակի՝

1-ին խումբ՝ 60% -ից ցածր	— Կյուրդուկի:
2-րդ խումբ՝ 60—70%	— Միջուրինի Բերե Ճմեռային:
3-րդ խումբ՝ 70—80%	— Լեռնային դեղեցկուչի, Միջուրինի Հիշատակին, Սուփումի դյուշես, Լենինականի ուշահաս, Բերե Ամանլի, Բիսսեմյանկա:

4-րդ խումբ՝ 80—90% — Կղըլ արմուտ, Անտառային գեղցկուհի, Հեղինե, Մալաշա, Զիր-նադրի:

Հստ պտղի մեծության՝

Միջինից ցածր՝ 50—100 գ — Կյուրդուկի, Զիր-նադրի, Կղըլ արմուտ, Սուխումի դյուշես:

Միջին՝ 100—150 գ — Լեռնային գեղցկուհի, Մալաշա, Բեսսեմյանկա, Բերե Ամանլի, Միջուրինի բերե ձմեռային, Անտառային գեղցկուհի:

Միջինից բարձր՝ 150—200 գ — Միջուրինի հիշատակին:

Խոշոր՝ 200—300 գ — Լենինականի ուշահաս, Հեղինե:

Պտղի համի որոշումը: Սորտի տարբերիչ և տնտեսական արժեքուր հատկանիշներից մեկը համարվում է պտղի համը, որը սրոշվում է համտեսի միջոցով: Պտղի համը պայմանավորված է ոչ միայն քիմիական կազմով, այլև ֆիզիկական հատկություններով: Հիմնական նյութերը, որոնք սրոշում են պտղի համը, շաքարներն են, թթուները և դրանց զուգորդումը, ինչպես նաև համի տարբերիչ անհատական երանգավորումներ՝ բուրմունքը, տտիպությունը, գառնությունը և այլ հատկանիշներ: Պտղամսի թանձրությունը (կոնսիստենցիան) նույնպես մեծ դեր ունի պտղի որակական գնահատականը տալիս, որը լինում է խոշորահատիկ, մանրահատիկ, ալրային, նուրբ, հյութալի, չոր և այլ զուգակցումներով: Հստ համտեսի տվյալների՝ խնձորենու սորտերից բարձր գնահատականի են արժանացել Բիսմարկ, Պեպին Զերնենկո, իսկ ցածր գնահատականի՝ Ֆլավա, Օլեգ, Բարուշկինո, Ռեբրիստոյե, Ռենետ Ռեշետնիկովի, Արկադ ձմեռային և Տիտովկա սորտերը:

Տանձենու սորտերից բարձր գնահատական են ստացել՝ Անտառային գեղցկուհի, Հեղինե, իսկ ցածր՝ Սուխումի դյուշես, Կյուրդուկի, Զիր-նադրի սորտերը:

Պտղապնդերի հիմիական կազմը: Սրա միջոցով որոշում են համը, սննդային արժանիքները և օգտագործման բնույթը: Պտղի միական կազմը հիմնականում կախված է սորտից, աճման միջավայրի պայմաններից և պտղի հասունացման աստիճանից: Հանագան գոտիներում տարրեր հասունացման ժամկետ ունենալու դեպ-

Խնձորենու սուբտի բերքի հաշվառման տվյալներ (1962 թ.)

Սոբակ անդանումը	Տնկան տարբերելու		Հաղորդական ծառելու		Մաղղաման ուժը բարելու		Հափարած թափուկի բանակը			Բերքավաճակ ազգային օրը		Փաստաթիվ բառավաճակը բառավաճակը		Հաջախանության բառավաճակը		Մեջական բառավաճակը
	Տնկան	տարբերելու	Հաղորդական	ծառելու	Մաղղաման	ուժը բարելու	Պարբերություն	Պարբերություն	Պարբերություն	Պարբերություն	Պարբերություն	Պարբերություն	Պարբերություն	Պարբերություն	Պարբերություն	Պարբերություն
Աստրախանի կարմիր	1938	4	4,0	4,0	7,9	16,5	24,4	8/8	116,2	190,6	70,3	57,1	14,0	175,6	47,6	
Պապիրոսկա	1939	5	3,0	3,0	11,8	18,0	29,8	10/8	40,5	108,6	138,4	113,3	23,0			
Տիտովկա	1938	6	4,0	4,0	6,9	22,9	29,8	14/8	159,5	213,1	136,5	136,5	42,6			
Ֆլավա	1939	5	4,0	4,0	16,3	37,3	53,6	12/9	168,9	145,6	145,6	140,6	50,7			
Ռեբրիստուկ	1939	3	3,0	3,0	6,1	19,8	25,9	27/8	66,3	66,3	66,3	66,3	22,1			
Պետրին Զերնենկո	1938	4	4,0	4,0	5,2	12,5	17,7	17/9	151,2	168,9	145,6	145,6	42,2			
Բիսմարկ	1938	5	5,0	4,0	4,5	13,2	17,7	15/9	185,2	203,2	140,6	140,6	50,7			
Կալվի անիսի	1938	3	4,0	3,0	5,5	14,0	19,4	29/9	99,4	99,4	99,4	99,4	33,1			
Ռենետ Ռեշետնիկովի	1939	3	4,0	4,0	5,2	15,2	20,4	3/9	114,3	124,7	124,7	124,7	41,5			
Արկադ Ամենային	1938	4	3,0	2,0	2,8	4,5	7,3	17/8	33,3	40,6	37,9	37,9	10,1			
Օլեք	1939	5	3,0	3,0	6,5	20,0	26,5	22/8	86,0	112,5	94,4	94,4	22,5			
Բաբուշկին	1940	3	2,0	3,0	1,3	2,9	4,2	16/9	24,5	28,7	28,7	28,7	9,6			

Տաճառի սուբսերի բերքի հաշվառման տվյալներ (1962 թ.)

Սորտի անվանումը	Տնկը ան տարրի թիվը	Հաշվառված ծառնուրկը բանակը	Մակերդան ուժը բարեկարգ բանակը	Հավաքած թափուկի բանակը			Բերքավագարան բանակը	Ընդունելու բանակը	Փաստաթիվ անդամների թիվը	Հարցարկի պահանջման արդյունքում բանակը	Հարցարկի պահանջման արդյունքում բանակը	Ենթակա ծառնի փաստաթիվը	Ենթակա ծառնի բանակը	
				Տակարգությունը	Պահանջման արդյունքում բանակը	Պահանջման արդյունքում բանակը								
Լեռնային գեղեցկուցի	1951	6	5,0	4,0	17,1	40,6	57,7	22/9	148,4	206,1	96,1	34,3		
Միչուրինի հիշատակին	1951	5	5,0	4,0	11,2	19,1	30,3	22/9	70,0	100,3	56,9	20,0		
Հեղինե	1951	5	5,5	4,0	19,7	20,1	39,8	25/9	139,1	178,9	112,7	35,8		
Լենինականի ուշահաս	1951	5	5,0	3,0	35,2	28,0	63,2	20/9	26,5	89,7	62,8	18,0		
Սովորումի դյուցես	1951	3	4,0	3,0	1,3	1,5	2,8	21/8	38,0	40,8	40,8	13,6		
Կլլլ-արմուդ	1951	4	4,0	4,0	2,0	2,6	4,6	23/8	50,1	54,7	49,0	14,4		
Զիր Նազրի	1951	3	4,0	4,0	5,8	13,1	18,9	6/9	29,5	48,4	48,4	16,1		
Բերե-Ամանլի	1951	3	3,0	3,0	0,3	1,6	1,9	7/9	25,5	27,4	25,5	9,1		
Անտառային գեղեցկուցի	1951	3	5,0	4,0	11,5	13,7	25,2	8/9	51,5	76,7	76,7	25,5		
Մալաշ	1951	3	4,0	2,0	2,5	3,7	6,2	6/10	10,4	14,7	14,7	5,0		
Կուրդուկի	1951	3	2,0	2,0	0,5	0,6	1,1	13/9	8,5	14,7	11,5	3,8		
Միչուրինի բերե ձմեռային	1952	3	4,0	3,2	1,4	1,9	8,3	6/10	13,0	16,3	16,3	5,4		
Բևսեմյանկա	1951	5	4,0	2,0	0,4	1,0	1,4	18/9	11,5	12,9	12,9	4,3		

քում թիմիական կազմը փոփոխվում է (տե՛ս աղյուսակներ 2, 2ա):

Պահունակության որոշումը: Պահունակությունը որոշելու համար ընտրվում են առողջ, առաջին տեսակի պտուղներ (յուրաքանչյուր սորտից 100 պտուղ): Պահելու ընթացքում ստուգվում և նշվում են պտղի մաշկի գունավորման փոփոխությունը, սպառղական հասունացման սկիզբը, գերհասունացումը, թառամումը, փառումը և համի կորուստի սկիզբը: Պահունակության վերջին նշաններն են՝ պտուղների 10%-ից ավելի մասսայական փառումը, համի կարուստը և թառամումը:

Հստ պահունակության տևողության խնձորենու սորտերը խթափում են հետեւյալ հերթականությամբ.

20—40 օր՝ Պապիրովկա, Տիտովկա, Արկադ ձմեռային, Օլեկ, Աստրախանի կարմիր:

40—60 օր՝ Ռեբրիստոյե, Ռենետ Ռեշետնիկովի:

60—100 օր՝ Բաբուշկինո:

100—175 օր՝ Կալվիլ անիսի, Ֆլավա:

175—220 օր՝ Բիսմարկ, Պելին Զերնենկո:

Տանձենու սորտերը խմբավորվում են՝

Մինչև 20 օր՝ Բեսսեմյանկա, Սուխումի դյուշես, Կյուրդուկի, Զիր-Նադրի, Մալաշա, Բերե Ամանլի, Կզըլ արմուղ, Անտառային գեղեցկուհի:

Մինչև 50 օր՝ Լեռնային գեղեցկուհի, Միշուրինի հիշատակին:

Մինչև 70 օր՝ Լենինականի ուշահաս, Հեղինե, Միշուրինի բերե ձմեռային:

Վճարատուների և հիվանդությունների ուսումնասիրությունները

Վճարատուները և հիվանդությունները մեծ վնաս են հասցնում ժողովրդական տնտեսությանը, դրանք դանդաղեցնում են ծառերի աճեցնողությունը, իշեցնում բերքատվությունը և վատացնում պտուղների ապրանքայնությունը: Հիվանդությունների և վճարատուների նկատմամբ դիմացկունությունը միայն սորտային առանձնահատկություն չէ, այդ գործում մեծ դեր ունեն նաև աճման միջավայրի պայմանները, ծառերի վիճակը, հասակը և բույսերի անհատական առանձնահատկությունները:

Ցածր ագրոտեխնիկայի և բույսերի վատ վիճակի դեպքում նրանց դիմացկունությունը հիվանդությունների և վճարատուների նկատմամբ նվազում է: Ուսումնասիրության ավլաները ցույց են

Խնձորենու սուրբերի ժիմիական կազմի տվյալները (1962 թ.)

Առրտի անվանումը	Եղող է կատարված ահաւիդում	Շաքարներ				Բողոքներ	Պայմանագիր	Ռ Ա Ջ Ա Մ Ա Խ Ա Բ Ի Ա Ր Ա Վ Ո Յ Տ Ա Հ Ա Ր Ա Վ Ո Յ Տ
		Զ Ա Բ Ա Մ Ա Խ Ա Բ Ի Ա Ր Ա Վ Ո Յ Տ	Բ Ա Խ Ա Բ Ի Ա Ր Ա Վ Ո Յ Տ	Հ Ա Վ Ա Բ Ի Ա Ր Ա Վ Ո Յ Տ	Ա Վ Ա Բ Ի Ա Ր Ա Վ Ո Յ Տ			
Թլեգ	16/10	10,2	7,3	6,38	0,98	0,61	1,125	3,55
Բաբուշկինո	16/10	13,97	10,23	8,69	0,75	0,32	—	3,8
Ռերիխստոյե	15/9	12,7	7,7	6,71	0,99	0,86	—	3,15
Ֆլավա	29/1	10,61	7,59	7,48	0,11	0,48	0,670	2,6
Աստրախանի կարմիր	20/8	12,27	7,92	6,38	1,54	0,94	—	2,75
Ռենես Ռեշենիկովի	16/10	12,4	7,2	7,2	—	0,61	1,108	3,5
Պետին Չերնենկո	29/1	10,01	7,92	6,82	1,1	0,40	0,290	2,7
Արկադ Ճմենային	15/9	12,39	9,38	6,28	3,1	0,29	—	3,85
Բիսմարկ	13/10	10,2	7,7	6,82	0,88	0,83	0,133	3,3
Կալվիլ անիսի	29/1	11,81	8,3	8,3	—	0,50	0,780	4,8
Պապիրովկա	20/8	12,82	8,3	6,60	1,70	1,22	—	2,60
Տիտովկա	15/9	10,99	6,82	6,82	—	0,61	—	3,45

Ա գ լ ս ւ ա կ լ շ ա մ

Տաճառնու սուրածի բիմիական կազմի տվյալներ (1962 թ.)

Մոբախ անվանումը	Եղբ և կատարված անուղիղը	Զոր հիմնիկը	Շաբարներ			Թուղթանոր քահանը	Համարական	Թուղթանոր քահանը	Պակասիկ	Վահանիկ	Բնակչությունը
			Ընդունակությունը	Համարական	Համարական						
Միջուրինի բերե ձմեռային	13/10	13,07	9,23	8,03	1,20	0,11	0,665				
Լեռնային դեղեցկուչի	9/10	12,99	10,68	8,3	2,38	0,05	0,141				4,2
Հեղինե	9/10	14,74	9,69	9,69	—	0,053	0,690				
Լեռնականի ուշահաս	1/10		8,58	7,28	1,30	0,1					
Միջուրինի հիշատակին	9/10	13,24	9,23	8,13	1,10	0,080	0,856				
Բեսսեմյանկա	15/9	14,59	8,30	7,2	1,1	0,09	—				
Սուխումի դուշահաս	4/9	12,53	6,60	6,10	—	0,21	—				
Կյուրղուկի	16/10	15,9	8,69	7,7	0,99	0,05	0,083				
Զիր Նաղուի	13/9	14,32	9,30	7,38	1,92	0,21	0,715				
Անտառային դեղեցկուչի	13/9	13,37	6,82	5,93	0,89	0,11	0,832				
Բերե Ամանլի	13/9	14,87	9,48	8,48	1,00	0,27	0,665				
Մալաշ	13/9	15,27	8,80	8,03	0,77	0,13	0,665				

ալիս, որ խնձորենու հիմնական վնասատուներն են՝ խնձորենու սեցը, օղակավոր մետաբազործը, պտղակերը, գորշ տիզը, խնձորենու կանաչ լիմինը, հիվանդություններից՝ տերեկի և պտղի քոսը։
Տանձենու մոտ՝ պսիլան, խնձորենու կարմիր տիզը, տերեւալոր լիմինը, բալենու լորձնային սղոցողը, հիվանդություններից՝ ուրեկի և պտղի քոսը վնասատուների և հիվանդությունների կատամար իրենց դիմացկունությամբ աշքի են ընկել խնձորենու լիգ, Պեպին Չերնենկո, իսկ տանձենու՝ Լեռնային դեղեցկուհի և Մալաշա սորտերը։

Սորտերի համառոտ բնուրագիրը։ Սորտերը տարբերվում են որենց մորֆոլոգիական հատկանիշներով և ագրոկենսաբանական առանձնահատկություններով։ Սորտեր տարբերող հատկանիշներն են. ծառի սաղարթը, տերևները, ծաղիկները և պտուղները։ Սորտային առանձնահատկությունների արտահայտման աստիճանը կախված է արտաքին պայմաններից և կիրառվող ագրոտեխնիկակայից։ Եթե արտաքին պայմանները համապատասխանում են սորտի պահանջներին, ապա դրանց բնորոշ հատկանիշները և առանձնահատկությունները ավելի լավ են զարգանում։

Խ Ն Զ Ո Ր Ե Ն Ի

Ամառային սորտեր։ Աստրախանի կարմիր։ Մի շարք պըտղաբանների կարծիքով սորտը ծագել է Աստրախանի շրջակայում, մոտ 150 տարի առաջ տարածվել է ամբողջ Ռուսաստանում և մեծ համբավ է ձեռք բերել որպես կայուն, շահավետ ամառային սորտ։ Սառը միջին աճեցողության է, խիտ ճյուղավորությամբ, կլորավուն սաղարթով։ Պատուղը միջին մեծության է, տափակ կլորավուն։ Պաղի մաշկը կանաչա-դեղնավուն է, հասուն շրջանում մանուշակա-կարմրավուն ինտենսիվ գունավորումով։ Պատուղները հասունանում են օգոստոսի կեսերին, բերքատվությունը՝ միջին կամ միջինից բարձր է, վեգետացիան վերջանում է վաղ լեռնային շրջաններում հանդիպում է մինչև 1500—2000 մ բարձրության վրա։ Սառերի ցրտադիմացկունությունը բավական բարձր է։ Դիմացկունությունը քոսի նկատմամբ միջինից ցածր է։ պտղակերից քիչ է վնասվում։ Պատուղները ամառային մյուս սորտերի նման շուտ ալլուրանման շեն զառնում, պահվում են 15—20 օր։

Սորտի արժանիքները։ Տեղի և հողի նկատմամբ պահանջկոտ չի, չորադիմացկուն է, վաղ և ամեն տարի պտղաբերող է, պտղակերով թույլ է վնասվում, համեմատաբար լավ պահունակ, փոխա-

գրադիմացկուն է, ունի գեղեցիկ և ինտենսիվ գունավորում, բավական լավ համ:

Սուրահի թերությունները: Արոշ շրջաններում երկարակեցությունը և բերքատվությունը ցածր են, թերում ունի դեպի պառաների մանրացում:

Պապիրովիկա: Ամառային լավագույն սորտերից է, ծագումը հայտնի չէ, հայրենիքը համարում են Մերձբալթյան հանրապետությունները, որտեղ այս սորտը շատ տարածված է, ներկայումս լայն տարածում է ստացել ՍՍՀՄ-ի պաղարուծական ամբողջ միջին գոտում, որոշ շափով հարավային մարզերում: Մառերի ցրտադիմացկունությունը բավականին բարձր է, սաղարթը կլորավուն, միջին խտության: Պտուղն ունի միջին մեծություն, կլորավուն է, կոնաձև, մաշկը բարակ, պինդ, կանաչ-դեղնավուն, լավ նկատելի սպիտակավուն հնիմամաշկային կետերով: Պտուղը հասունանում է հուլիսի վերջներին, օգոստոսի սկզբներին, միջին բերքատու է, բարը և սպառողական հասունացումը լինում են համարյա միաժամանակ. պատուները կարելի է պահել 10—15 օր: Պտղի տեսքը գրավիլ է, օժտված լավ թարմացնող թթվա-բաղցր համով, նուրբ, հյութալի պտղամսով: Գերճասուն վիճակում պտուղները դառնում են ալրային, փոխադրագիմացկունությունը ցածր է: Լավագույն փռշոտիչներն են Աստրախանի կարմիր, Ռենետ Ռեզետնիկովի սորտերը:

Սուրահի արժանիքներն են՝ վաղ պտղաբերությունը, պտուղների վաղ հասունացումը և լավ որակը:

Թերություններն են՝ ցածր փոխադրագիմացկունությունը և պահունակությունը:

Տիտովիկա: Հնագույն ուստական սորտ է, 150 տարի առաջ առաջին անդամ նկարագրել է Մ. Մ. Բոլոտովը: Լայն տարածված է ամբողջ ՍՍՀՄ-ի միջին գոտում: Սորահի ցրտադիմացկունությունը բարձր է, ծառերը աշքի են ընկնում իրենց երկարակեցությամբ: Պտղամիսը սպիտակ է, մանրահատիկ, միջին հյութալիությամբ, թթվաբաղցր, ուժեղ բուրմունքով: Պտուղը հասունանում է օգոստոսի երկրորդ կեսին, պահվում է 30—40 օր, պտղի հասունացումը տեղի է ունենում ոչ միաժամանակ: Միջին բերքատվության է, պտուղը պտղաճյուղերին թույլ է միանում, փոխադրագիմացկունությին: Պտուղները արագ դառնում են ալրային և նեխվում են: Տերեները և պտուղները բռնով թույլ են վարակվում:

Սորտի արժանիքներն են՝ բարձր ցրտադիմացկունությունը, պտղի արտաքին տեսքի գրավչականությունը:

Թերություններն են՝ ճյուղերի հեշտությամբ կոտրվելը և պտղի առաջածր որակը:

Արկադ Ճմբուային (ստուգի): Սորտը ստացել է ի. Վ. Միջունիքինը 1901 թ. Նեղվեցիկ և Անտոնովկա սորտերի տրամախաշությունը: Սերմից ստացված ծառը առաջին անգամ պտղաբերել է 1911 թ.: Ծառի աճեցողությունը միջինից բարձր է, ճյուղավորությունը իրշին խտության, սաղարթը կիսագնդաձև: Պտուղը միջին մեծության է, կլորավուն կոնաձև, առանց կողավորության: Պտղամաշկը բեղին է, կարմրավուն շերտերով: Պտուղը հասունանում է օգոստոսի երկրորդ կեսին, բերքատվությունը բարձր է: Պտղամիսը սպիտակ է, ճյութալի, բաղցր, համը միջակ է, համարվում է սեղանի նրկրորդ կարգի սորտ: Պտուղները պահվում են 20—30 օր, փոխադրամացկունությունը բարձր չէ: Ծառերի ցրտադիմացկունությունը բարձր է, պտուղները և տերևները քուից վնասվում են բավական ուժեղ:

Սորտի տարբերիչ հատկանիշներն են՝ պտղի համը, պտուղների պահունակության տևողությունը:

Աշնանական սորտերի Օլեգ: Սորտն ստացել է ի. Վ. Միջուրինը Սկրիժապել պուրապուրվի ազատ փոշոտումից ստացված ավագույն սերմնարույսերից: Սերմնարույսը առաջին անգամ պրացարերել է 1904 թ.: Ծառի աճեցողությունը միջին է, սաղարթը կիսագնդաձև, միջին խտության: Պտղի մեծությունը միջինից բարձր է, ձևը տափակ-կլորավուն, պտղամաշկը միջին ամրության է, կաշանաշղթեղնալվում, հասուն շրջանում համարյալ լրիվ ծածկվում է գորշ ծիրանագույն գծիկներով, կողավորությունը թույլ է արտահայտված՝ միայն պտղի վերևի մասում:

Պտուղը հասունանում է օգոստոսի վերջերին, սեպտեմբերի սկզբներին, պահվում է 30—40 օր: Միջին բերքատվության է: Պտղամիսը սպիտակ է, փափուկ, թեթև հատիկային կառուցվածքով, թթվա-բաղցրավում համուի: Համարվում է սեղանի երկրորդ կարգի սորտ: Ծառերի ցրտադիմացկունությունը բարձր է, քուի նկատմամբ ունի միջին դիմացկունություն, պտղակերով թույլ է վնասվում:

Ռերիխստյե: Ստացել է Վ. Ի. Միջուրինը 1913 թ. Ալավանկա և Դանցիկի Ռերիխստյե սորտերի տրամախաշությունը: Առաջին անգամ պտղաբերել է 1926 թ.: Ծառը ուժեղ աճեցողության է, սա-

ղարթը ձվածե, ճյուղավորությունը միջին խտության: Պտղի մեծությունը միջակ կամ միջինից բարձր է, տափակ-կլորավուն, լայարտահայտված կողավորությամբ: Պտղամաշկը պինդ է, կանաչագեղնավուն, ծածկված է մուգ կարմրավուն նրբազծերով: Պտղամիսը գեղնավարդագույն է, խոշորահատիկ, թթվաքաղցրավուն համով: Համարվում է սեղանի երկրորդ կարգի սորտ: Պտուղը հասունանում է օգոստոսի վերջերին, սեպտեմբերի սկզբներին, պահվում է 40—50 օր: Բերքատվությունը միջինից ցածր է, ծառի ցրտադիմացկունությունը՝ միջինից բարձր, կմախրային ճյուղերը բավական շատ տուժում են արևահարությունից: Քոսի նկատմամբ ունի միջին դիմացկունություն:

Աննետ Անեշեանիկովի: Ի. Ի. Անեշեանիկովի կողմից ստացված Ռենետ սորտի սերմերի ցանքի սերմնարուկսերից Ի. Վ. Միշուրինը ընտրել է ստացել է այս սորտը: Ցանքը կատարվել է 1902 թ., առաջին պտղաբերությունը եղել է 1914 թ.: Սառը միջին աճեցողության է, սաղարթը կիսագնդածե, միջին խտության: Պտղի մեծությունը՝ միջինից ցածր է, տափակ-կլորավուն, պտղամաշկը կանաչագեղնավուն, հասուն ժամանակ՝ ոսկե-դեղնավուն, թույլ արտահայտված կարմրությամբ: Պտղամիսը սպիտակ-դեղնավուն է, մանրահատիկ, միջին հյութալիության, թթվաքաղցր համով: Համարվում է սեղանի երկրորդ կարգի սորտ: Պտուղը հասունանում է սեպտեմբերի առաջին կեսերին, պահվում է 40—50 օր, ունի միջին բերքատվություն: Սառերի ցրտադիմացկունությունը բարձր է, քոսի նկատմամբ դիմացկունությունը միջինից ցածր է:

Սառի առանձնահատկությունները: Ցրտադիմացկունությունը բարձր է, ճյուղերը ճկուն, բնափայտը ամուր և թափուկը բիչ:

Ֆլավա: Ստացել է Ի. Վ. Միշուրինը 1903 թ.: Կիտայկա խընդորենու սերմերից, բեղմնավորված Ռենետ Բլենգեյմսկի սորտի փոշով, առաջին պտղաբերությունը եղել է 1917 թ.: Սառի աճեցողությունը ուժեղ է, լայն ձվածե սաղարթով, ճյուղավորությունը խիտ: Պտուղը միջին մեծության է, հոլածե: Պտղամաշկը կանաչագեղնավուն, լրիվ հասուն ժամանակ՝ վառ դեղնավուն: Պտղամիսը պինդ է, կոպիտ, հյութալիությունը թույլ, թթվային համով: Պտուղը հասունանում է սեպտեմբերի երկրորդ կեսին, պահվում է մինչև մարտի կեսերը: Համարվում է սեղանի երկրորդ կարգի սորտ: Բերքատվությունը միջինից բարձր է:

Սառի առանձնահատկությունները: Ցրտադիմացկունությունը բարձր է, ճյուղերը ճկուն են, պտուղներն ամուր են միացած, թա-

փուկը բիշ է, հիվանդությունների և վնասատունների նկատմամբ
դիմացկուն է, զողի նկատմամբ՝ պահանջկուտ (նկ. 1):

Չ մ եռային սորտեր, Պեպին Զերնենկո: Արժեքավոր
ձմեռային սորտ է, ստացել է Ս. Յ. Զերնենկոն Զերնիգովի նա-
հանգում 1904 թ.: Պեպինկա. Լիտովսկայա և Կալվիլ սնեծնի սոր-
տերի տրամախաչումից: Ծառը միջին աճեցողության է, սաղարթը
զնդանէ, ճյուղավորությունը՝ միջին խտության: Պտղի մեծությունը



Նկ. 1. Ֆլավա:

միջինից բարձր է, ձվա-կոնաձև: Պտղամաշկը կանաչա-դեղնավուն,
լրիվ հասուն ժամանակ՝ վառ դեղին (ծղոտագույն), թույլ ողող-
ված վարդա-կարմրավուն գունավորումով: Պտղամիսը սպիտակա-
դեղնավուն է, մանրահատիկ, միջին ճյութալիությամբ, քաղցր, թե-
թև բուրմունքով: Պտղով հասունանում է սեպտեմբերի կեսերին,
սովորական պահեստային պայմաններում պահվում է մինչև մար-
տի վերջերը: Ծառերի ցրտադիմացկունությունը բավական բարձր
է: Տերևները և պտուղները քոսի նկատմամբ դիմացկուն են: Հստ
պտղի որակի և պահունակության արժեքավոր սորտ է:

Սորտի տարբերիչ հատկանիշներն են՝ պտղով ձվա-կոնաձև է,

Ճագարը բավական նեղ, ճառագալթաձև, ժանդուված: Բաժակը
մեծ է (նկ. 1):

Քիսմարկ: Սիդնեյում բուսաբան Մյուլլերը անհայտ ծագում
ունեցող սերմից այս սորտը ընտրել և տարածել է շնորհիվ պտղի
լավ որակի: Սառը միջին աճեցողության է, սաղարթը կիսազնդա-
ձև, ճյուղավորությունը խիտ: Պտղի մեծությունը միջին է, լայն կո-
նաձև: Պտղամաշկը կանաչա-դեղնավուն է, լրիվ հասուն ժամա-
նակ՝ ողողված դինե-կարմրավուն գունավորումով: Պտղամիսը
սպիտակ է, մանրահատիկ, հյութալի, ուժեղ բուրմունքով, դուրե-
կան թթվաբաղցրավուն համով: Համարվում է սեղանի առաջին
կարգի սորտ: Պտուղը հասունանում է սեպտեմբերի կեսերին, պա-
հանակության տևողությունը բարձր է, սովորական պահեստներում
պահվում է մինչև մարտի վերջը: Բերքատվությունը միջինից բարձր
է: Սառերի ցրտադիմացկոնությունը բավական բարձր է, ճյուղերը
ճկուն, պտուղները ամուր կպած ճյուղերին: Քոսի և պտղակերի
նկատմամբ բավական դիմացկուն է:

Բարուշկինո: Այս սորտն ունի ոռոսական ծագում, հայտնի է
ավելի քան 100 տարի, ամենից շատ տարածված է ՍՍՀՄ-ի կենտ-
րոնական մարզերում: Սառը միջին աճեցողության է, սաղարթը
լայն կլորավուն, նոսր: Պտուղը միջին մեծության է, տափակ-
կլորավուն: Պտղամաշկը պինդ է, հիմնական գույնը կանաչ է, լրիվ
հասուն ժամանակ՝ բաց դեղնավուն, ծածկված թույլ կարմրավուն
գույնով: Պտղամիսը սպիտակ է, մանրահատիկ, հյութալիությունը
թույլ, միջին բուրմունքով, թթվաբաղցրավուն: Պտուղը հասունա-
նում է սեպտեմբերի կեսերին, պահվում է մինչև հունվարի վերջը:
Սառը միջին բերքատու է, ցրտադիմացկոնությունը բավա-
կան բարձր է, պտուղները ամուր կպած են ճյուղերին, բայց հասու-
նացման շրջանում ուժեղ թափվում են: Քոսի նկատմամբ ունի մի-
ջին դիմացկոնություն, համարվում է սեղանի երկրորդ կարգի
սորտ:

Սորտի արժանիքներն են՝ պատուղների պահունակության տևո-
ղությունը բավական երկար է, համբ բավարար, փոխադրադիմաց-
կուն է:

Սորտի բերուրյունն այն է, որ ծառերը ուշ են պաղարերում:
Կալվիլ անիսի (սառուգիչ): Սորտն ստացել է ի. վ. Միջուրինը
Անիս բարխատնի և Կալվիլ ձմեռային սորտերի արամախաշումից:

Սառի աճեցողությունը միջինից բարձր է: Սաղարթը կլորա-
վուն, ճյուղավորությունը խիտ: Պտուղը միջին մեծության է, լայն
կոնաձև, լավ արտահայտված նեղ կողերով: Պտղամաշկը պինդ է,

կանաշա-գեղնավուն, հասունացման շրջանում ծածկվում է գեղեցիկ, վառ կարմրավուն գույնով: Պտղամիսը սպիտակ է, մանրահատիկ, միջին հյութալիությամբ, թթվաքաղցր, ուժեղ բուրմունքով: Պտուղները հասունանում են սեպտեմբերի վեջին տասնօրյակում, պահվում են մինչև մարտի կեսերը: Միջին բերքատու է: Սառերի ցրտադիմացկունությունը միջինից ցածր է:

Սորտի տարբերիչ նատկանիշները: Տերևները բաց կանաշավուն են, խոշոր սղցանման եղբերով, պատուղները լայն կոնաձև են, համարյա լրիվ ծածկված կարմրավուն գունավորումով, լավ արտաշալաված նեղ կողերով: Պտղաբերում է հիմնականում պտղաճյուղիկների վրա:

S U N Q E N H

Ա մ ա ռ ա յ ի ն ս ո ր տ ե ր ո ւ Սովորումի դյուշես: Սորտի ծագման մասին հավասարի տվյալներ չկան: Կուլտուրական սորտի պատահական սերմնաբույս է, շրջանացված է Վրաստանում (Արխաղական ՍՍՀ-ում):


Երիտասարդ ծառերի աճը թույլ է, բայց հետագայում հասնում է զգալի շափերի. սաղարթը բրդածև է, ճյուղավորությունը՝ միջին խտության: Պաղի մեծությունը միջինից ցածր է, զանգակածև: Պտղամաշկը միջին ամրության է, սկզբում գորշ կանաշավուն, իսկ հասունացման ժամանակ՝ դեղնավուն: Պտղամիսը բաց դեղնավուն է, խոշորահատիկ, հյութալի, քաղցր, թույլ թթվությամբ և տտիպությամբ: Սառերը միջին բերքատվության են: Պտուղը հասունանում է օգոստոսի կեսերին, պահվում են երկու շաբաթ: Սառերի ցրտադիմացկունությունը բավական բարձր է, պտուղները ճյուղերին ամուր կպած: Սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն: Համարվում է սեղանի երկրորդ կարգի սորտ:

Սորտի արժանիքներն են՝ հողային պայմանների և խնամքի նկատմամբ բիշ է պահանջկոտ, պտուղները վաղ են հասունանում:

Թերությունը՝ պտուղների ոչ բավարար համն է:

Կզրի արմուղ: Սառը միջին աճեցողության է, սաղարթը լայն բրդածև, խտությունը նոսր: Պաղի մեծությունը միջինից ցածր, կլորավուն-ձվածև: Պտղամաշկը միջին ամրության է: Հիմնական գույնը կանաչ է, հասուն ժամանակ ծածկված գինեկարմրավուն դունավորումով: Պտղամիսը սպիտակավուն է, մանրահատիկ, միջին հյութալիությամբ, քաղցրաթթվային համով: Սառերը միջին

բերքատու են: Պտուղները հասունանում են օգոստոսի վերջերին, պահվում են երկու շաբաթ: Մառնի ցրտադիմացկունությունը բարձր է, պտուղը ճյուղին ամուր է կպած: Բավական դիմացկուն է սնկային հիվանդությունների նկատմամբ: Համարվում է սեղանի երկրորդ կարգի սորտ:



Նկ. 2. Պեղին ջերնենկո:

Հիր-նաղրի: Ժողովրդական սելևկցիայի հնագույն աղբրեջանական սորտ է: Լայն տարածված է Աղրքեջանի ցածրադիլի և նախալեռնային շրջաններում: Մառի աճեցողությունը բավական ուժեղ է, լայն բրդածե, ճյուղավորությունը միջին խտության: Պտուղը փոքր է, երկարավուն, շշատանձածե, պտղամաշկը պինդ է, կանաչա-դեղնավուն, հասուն ժամանակ՝ դեղին նարնջակարմրավուն գունավորումով: Պտղամիսը սպիտակ է, պինդ, հյութալիությունը միջին, առանց քարային հատիկների, համը քաղցր է, թույլ թթվությամբ, առանց բուրմունքի: Մառերի բերքատվությունը միջինից բարձր է: Պտուղները հասունանում են օգոստոսի վերջերին, սեպտեմբերի սկզբներին, պահվում են երեք շաբաթ: Մառերի ցրտադիմացկունությունը բավական ցածր է, պտուղը ճյուղ-

դին ամուր կպած չէ: Սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն է: Համարվում է սեղանի երկրորդ կարգի սորտ:

Սորտի արժանիքները: Մառերը երկարակյաց են, բերքատվությունը բավական բարձր է:

Թիրությունն այն է, որ պտուղները մանր են:

Ինսսեմյանկա (ստուգիչ): Հնագույն ոռւսական սորտ է, հավանաբար բազմամյա ժողովրդական սելեկցիայի արդյունք, ամենաշատ տարածված սորտն է ՍՍՀՄ-ի միջին գոտում: Բևսսեմյանկա անունն ստացել է պտուղների մեծ մասի մեջ սերմերի բացակայության պատճառով: Մառերի ամեցողությունը միջինից բարձր է, սաղարթը լայն բրդաձև: Պտուղների մեծությունը միջինից ցածր է, կարճ տանձաձև: Պտղամաշկը պինդ է, կանաչ, հասուն ժամանակ՝ ուսկյա դեղնավում, կարմրա-դարչնագույն թշիկով: Պտղամիսը դեղնավուն է, խոշորահատիկ, հյութալի, կիսահալող, թեթև թնդահամությամբ, բաղզը: Մառերը միջին բերքատու են, պտուղը հասունանում է օգոստոսի վերջերին, սեպտեմբերի սկզբներին, պահվում է մինչև 10 օր: Մառերի ցրտադիմացկունությունը բարձր է, պտուղը ճյուղին ամուր է կպած, սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն է:

Ա. Շ Ն Ա. Ն Ա. Յ Ի Ն Ս Ո Ր Տ Ե Ր

Լեռնային գեղեցկունի: Այս սորտը ստացվել է Լեռնինականում, Պ. Գ. Կարանյանի կողմից՝ Անտառային գեղեցկունի և Միջուրինի Բերե ձմեռային սորտերի տրամախաչումից: Երջանացված է Հայաստանի լեռնային գոտում: Մառը միջին ամեցողության է, սաղարթը բրդաձև, ճյուղավորությունը խիտ: Պտուղը միջին մեծության է, կլորավուն կամ կարճ տանձաձև: Պտղամաշկը բարակ է, միջին ամրության, հիմնական գույնը դեղին, հասուն ժամանակ՝ դեղնառուսկեղուն, մուգ կարմրավուն գունավորումով: Պտղամիսը սափիտակ է, մանրահատիկ, առանց քարային բջիջների, հյութալի, բաղզըրա-թթվային դեսերտային համով: Մառերի բերքատվությունը միջինից բարձր է, պտուղները հասունանում են սեպտեմբերի կեսերին, պահվում են 40—50 օր:

Մառերն ունեն բարձր ցրտադիմացկունություն, պտղի միացման ամրությունը ճյուղին միջին է, սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն է: Լավագույն փոշոտիչներն են Միջուրինի հիշատակին, Անտառային գեղեցկունի և Ղաբաղ արմուղ սորտերը:

Սուրահ արժանիքը ծառերի բարձր ցրտադիմացկունությունն է:

Սուրահ բերարյունը պառազների ոչ երկարատև պահունակությունն է:

Միշուրինի նիշատակին: Ստացել է Պ. Գ. Կարանյանը՝ Անտառային գեղեցկունի և Միշուրինի բերե ձմեռացին սորտերի արամախաշումից: Շրջանացված է Հայաստանի լեռնային գոտում: Սառութեղ աճեցողության է, սաղարթը նեղ բրգածն, միջին խոռոչյան, պտղի մեծությունը միջինից բարձր է, հակառակ ձվածն կամ բութ տանձածն է (նկ. 3): Պտղամաշկը միջին ամրության է, դեղնականաշավուն, հասուն շրջանում՝ բաց գեղնավուն՝ մուգ կարմրավուն գունավորումով: Պտղամիսը սպիտակ է, խոշորանատիկ, հալչող, հյութալի: ունի մուշկային բուրմունք, բաղցրավուն համ: Սառերի բերքատվությունը միջին է, պտղուղը հասունանում է սեպտեմբերի վերջերին, պահվում է 40—50 օր:

Սառերն ունեն բարձր ցրտադիմացկունություն: Պտղի միացման ամրությունը ծառին միջին է: Սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն: Լավագույն փոշոտիչներն են՝ լեռնային գեղեցկունի, Հեղինե, լենինականի ուշահաս, Բևսենմյանկա, Անտառային գեղեցկունի, Սուխումի դյուշես սորտերը:

Սուրահ արժանիքներն են՝ ծառերի բարձր ցրտադիմացկունությունը և պտղի լավ համը:

Բերե Ամանիլի: Պատահական սերմնարույս է, որը դրանքի է Արևմտյան Եվրոպայում մոտավորապես 1826 թ.: ԱՄՀՅ-ում բիշ է տարածված, հաճախ կարելի է հանդիպել Հյուսիսային Օսեբիայում, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի նախալեռնային մասերում:

Սառերի աճեցողությունը բավական ուժեղ է, սաղարթը անկանոն է, նոսր, կախ ընկած ձյուղերով: Պտղուղը տանձածն է, միջինից բարձր մեծության, պտղամաշկը պինդ է, դեղնականաշավուն, հասուն ժամանակ՝ ոսկե-գեղնավուն, կարմրագարշնագույն գունավորումով: Պտղամիսը դեղնասպիտակավուն է, մանրահատիկ, նուրը, հյութալի, բուրմունքը միջին, ունի թթվաբղրավուն համ:

Սառերի բերքատվությունը միջին է, պտղուղը հասունանում է սեպտեմբերի առաջին տասնօրյակում, պահվում է երկու շաբթի: Սառերի ցրտադիմացկունությունը բավական բարձր է: Պտղուղը ձյուղին ամուր է կատած, սնկային հիվանդությունների և պտղակերի նկատմամբ դիմացկուն է: Լավագույն փոշոտիչներն են՝



Նկ. 3. Միջաւորինի հիշատակին

Հեղինե, Սուխումի դյուցես, Կղըլ արմուդ, Անտառային գեղեցկուհի սորտերը:

Սորտի արժանիքներն են՝ ծառերը առողջ են և երկարակյաց, բերքատվությունը բավական բարձր, պտղի համը լավ:

Թերություններն են՝ պտղի համը կայուն չէ, անբարենպաստ պայմաններում խիստ վատանում է:

Մալաշ: Ժողովրդական սելեկցիայի հնագույն հայկական սորտ է, լայն տարածված է Հայաստանի ցածրադիր գոտիներում, Աղրբեջանի, Նախիջևանի շրջանում և մասամբ Վրացական ՍՍՀ-ում:

Սառը միջին աճեցողության է, սաղարթը լայն բրդածե, ճյուղավորման խտությունը՝ միջին: Պտուղը շշատանձածէ է, միջին մեծության: Պտղամաշկը ամուր է, ղեղնականաշավուն, հասուն շրջանում՝ դեղնա-ոսկեգույն, արևի կողմում՝ թույլ գունավորումով: Պտղամիսը ղեղնավուն է, նուրբ, հյութալի, յուղային, հալլող, քաղցր, ունի լավ բուլմունք և հիանալի գեսերտային համ: Սառերի բերքատվությունը լենինականի բարձրավանդակի պայմաններում միջակից ցածր է, պտուղները հասունանում են սեպտեմբերի առաջին կեսերին, պահվում են 15—20 օր: Սառերն ունեն միջին ցրտադիմացկունու-

բյուն, պաղի միացման ամրությունը ճյուղին՝ միջին։ Սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն է։

Սուրբ արժանիքն է՝ պատուղների դեսերտային լավ համբ։

Թերություններն են՝ ծառերի ցածր ցրտադիմացկունությունը, պտուղների կարճատև պահունակությունը։

Անտառային զեղեցկունի (ստուգիչ)։ Պատահական սերմնաբույս է, գտնվել է Բելգիայում՝ XIX դարի սկզբներին, լայնորեն տարածված է Արևմտյան Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում։ ՍՍՀՄ-ում տարածված է հարավային շրջաններում։ Բարձր ցրտադիմացկուն սորտերից է։ Մառերի աճեցողությունն ուժեղ է, սաղարթը լայն բրդած, ճյուղավորման խտությունը՝ միջին։ Պտղի մեծությունը միջինից բարձր է՝ ձվատանձակներ։ Պտղամաշկը բարակ է, պինդ, կանաչաղեղնավուն, հասուն շրջանում՝ ոսկյա-դեղնավուն, վառ կարմրավուն գունավորումով։ Պտղամիսը դեղնա-սպիտակավուն է, մանրահատիկ, հյութալի, յուղանման, բաղցր, ոմի հիանալի գեսերտային համ, ուժեղ բուրմունք։ Մառերի բերբատվությունը բարձր է, պտուղները հասունանում են սեպտեմբերի առաջին կեսին, պտղի միացման ամրությունը ճյուղին միջինից ցածր է։ Պահվում է 2—3 շաբաթ։ Ժամանակին հավաքելու գեպքում (հասունացումից 10 օր առաջ) գիմանում է տեղափոխումներին։ Հիմնականում օգտագործվում է թարմ վիճակում։ Մառերն ունեն բարձր ցրտադիմացկունություն, հողի նկատմամբ պահանջկոտ չեն, բայց լավ են աճում բերբի, փոփոք հողերում։ Մի շարք դրական հատկանիշներից բացի ոնի բարձր ցրտադիմացկունություն, բերբատվություն, պտղի գերազանց համալիին հատկություններ։ Սորտն ունի երկու էական թերություն՝ պտուղը և տերմները շատ ուժեղ վնասվում են բոսից և պտուղները հեշտությամբ թափվում են։

ՈՒԾ ԱՇԽԱՆԱՅԻՆ ՍՈՐՏԵՐ

Հեղինե։ Մատացել է Պ. Գ. Կարանյանը՝ Անտառային զեղեցկունի և Միջուրինի բերե ձմեռային սորտերի տրամախաչումից։ Շրջանացված է Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում։ Տարբեր միկրոգոտիներում տարվում են արտադրական փորձարկումներ։

Մառերը միջին աճեցողության են, լայն կլորավուն սաղարթով, մասամբ կախ ընկած ճյուղերով։ Պտուղը կլորավուն է կամ բութ տանձաձակներ։ Միջինից բարձր (նկ. 4)։ Պտղամիսը պինդ է, կանաչաղեղնավուն, հասուն շրջանում՝ մուգ-կարմրավուն ծածկությով, որը գրաղեցնում է պտղի կեսը։ Պտղամիսը սպիտակ է, մանրահատիկ

Հյութալի, յուղային, ունի միջին բուրմունք, թթվաքաղցրավուն, դեսերտային համ: Սառերի բերքատվությունը բարձր է, պտուղները հասունանում են սեպտեմբերի վերջին տասնօրյակում և պահպամ 60—70 օր: Հիմնականում օգաագործվում են թարմ վիճակում: Պաղի միացման ամրությունը ծառին միջինից բարձր է: Սառերն ունեն բարձր ցրտադիմացկունություն: Լավ են տանում զերմաստիճանի տատանումները, որը բնորոշ է լեռնային շրջաններին: Սնկային հիվանդությունների և պտղակերի նկատմամբ դիմացկուն է: Լավագույն փոշութիշներն են՝ կենինականի ուշահաս, Միջուրինի հիշատակին, Անտառային գեղեցկուհի սորտերը:



Նկ. 4. Հեղինե

Սորտի արժանիքներն են՝ պտղի գեսերտային համը, ծառերի ցրտադիմացկունությունը և դիմացկունությունը զերմաստիճանի տատանումների նկատմամբ:

Կենինականի ուշահաս: Ստացել է Պ. Գ. Կարանյանը՝ Անտառային գեղեցկուհի և Միջուրինի բերե ձմեռային սորտերի տրամախաչումից, շրջանացված է Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում: Սառերի աճեցողությունը ուժեղ է, սաղարթը՝ բրգաձեւ, ճյուղավորման խառնությունը՝ միջին: Պտուղը կլորավուն է, խո-

շոր: Պտղամաշկը կանաչա-դեղնավուն: Հասուն ժամանակ՝ վառ կարմիր գույնավորումով: Պտղամիսը սպիտակ է, նուրբ, լուղալին, հյութալի, ունի միջին բուրմունք, բաղցրավուն, դևսերտային համ, Սառերի բերքատվությունը միջինից բարձր է, պառզները հասունանում են սեպտեմբերի վերջին տասնօրյակում: Պտղի միացման ամրությունը ճյուղին միջինից ցածր է, պառզները պահպամ են 60—70 օր, հիմնականում օգտագործվում են թարմ վիճակում: Սառերն ունեն բարձր ցրտադիմացկանություն: Լավ են տանում ջերմաստիճանի տատանումները, սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն են, իսկ պտղակերի նկատմամբ՝ միջին:

ԶՄԵՌԱՅԻՆ ՍՈՐՏԵՐ

Կյուրղուկի: Աղրբեջանական ժողովրդական սելեկցիային առըստ է: Սառերը միջին աճեցողության են, սաղարթը կլորավուն, բրդածե, նոսր, Պտուղը ձվաձև է, մանր, պտղամաշկը պինդ, կանաչավուն, հասուն շրջանում՝ կանաչագեղնավուն: Պտղամիսը սպիտակ է, խոշորահատիկ, թիզ հյութալի, ունի թույլ բուրմունք ու բաղցրավուն համ: Սառերի բերքատվությունը միջինից ցածր է, պառզները հասունանում են հոկտեմբերի առաջին տասնօրյակում, պահպամ են 10—20 օր: Սառերը բավականին ցրտադիմացկուն են: Մեկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն է:

Միշուրինի բերե ձմեռային (ստուգի): Ստացել է ի. Վ. Միշուրինը՝ Ռևուրիական տանձենու սերմնարույսը ծաղկման առաջին տարում խաչասերելով հարավային Ռույալ սորտով: Ստացված սորտը իր մեջ զգալիորեն համատեղել է ծնողների լավագույն հատկանիշները:

Սառերի աճեցողությունը միջինից բարձր է, սաղարթը՝ լայն, բրդածե, նոսր, որոշ շափով կախ ընկած ճյուղերով: Պտուղը միջին մեծության է, կարճ տանձածե, պտղամաշկը պինդ, բաց կանաչավուն, հասուն շրջանում՝ գորշ, մուգ կարմրավուն գունավորումով: Պտղամիսը սպիտակ է, խոշորահատիկ, կիսահալզող, հյութալի, տափակ, ունի թույլ բուրմունք, գիներաղցրավուն համ: Սառերի բերքատվությունը միջինից բարձր է: Պտուղը հասունանում է հոկտեմբերի առաջին տասնօրյակում: Պտղի միացման ամրությունը ճյուղին ուժեղ է: Պտուղը պահպամ է 30—40 օր: Սառերը բավականին ցրտադիմացկուն են, բունն ունի համեմատարար թույլ դիմացկունություն: Պտուղները թիզ են վարակվում բոսով և պտղակերով: Համային հատկանիշները շատ փոփոխական են, կապված են

տարվա օդերևութաբանական, ինչպես նաև հողային պայմաններից Որոշ տարիների ստացվում են բարձր որակի խոշոր պտուղներ, իսկ երբեմն էլ պտուղները լինում են մանր, անհամ, տտիպ, պտղամիսը կոպիտ, մնջ բանակությամբ բարային բջիջներով:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Խնձորենու և տանձենու ուսումնասիրվող սորտերը բարձր բերքատվությամբ աշքի շեն ընկնում: Համեմատաբար լավ բերք է բատացվել խնձորենու Աստրախանի կարմիր, Ռենետ Ռեշետնիկովի, Պետին Չերնենկո, Բիսմարկ, իսկ ցածր՝ Բարուշկինո, Ռեբրիստոյե, Արկադ Ճմեռային սորտերից:

Տանձենու բարձր բերք են տվյալ Հեղինե, Լեռնային գեղեցկուհի, Լենինականի ուշահաս, Միջուրինի հիշատակին, իսկ ցածր՝ Մալաշա, Բեսսենյանկա, Միջուրինի Բերե ճմեռային և Կյուրդուկի սորտերը:

Մառերը հիմնականում պտղաբերում են պարբերաբար, որը կախված է տեսակի և սորտի կենսաբանական առանձնահատկություններից: Տանձենու մոտ պարբերականությունը համեմատաբար թույլ է արտահայտվում:

Լենինականի պայմաններում խնձորենու սորտերի պտուղների պահունակության տեսղությունը տատանվում է 10—220 օր: Շատ վաղ, հուլիսի կեսերին հասունանում են Աստրախանի կարմիր, Պապիրովկա սորտերի պտուղները, ուշ հասունացող սորտերի թվին են պատականում Բիսմարկ և Պետին Չերնենկո սորտերը, որոնց պտուղները սովորական պտղապահեստարաններում պահվում են մինչև ապրիլ ամիսը:

Տանձենու սորտերից վաղ հասունանում են Սուխումի դյուշիս և Կղզի արմուղ սորտերը: Ուշ հասունացող սորտերից են Հեղինեն և Լենինականի ուշահասը: Ուսումնասիրության երկու տարվա տվյալների հիման վրա իրենց ընդհանուր հատկանիշներով աշքի են ընկել խնձորենու Աստրախանի կարմիր, Պապիրովկա, Բիսմարկ, Պետին Չերնենկո, իսկ տանձենու՝ Հեղինե, Լենինականի ուշահաս, Լեռնային գեղեցկուհի և Բերե Ամանլի սորտերը, որոնք կարելի են բաշխավորել լեռնային գոտու շրջաններում շրջանացնելու և սորտիմենտը լրացնելու համար:

Խնձորենու և տանձենու սորտերի վարակվածությունը հիվանդություններով և վնասվածությունը վնասատուներից կախված են սորտային հատկություններից, կլիմայական պայմաններից, ագ-

բութեխնիկայից և ծառի անհատական առանձնահատկություններից:
Հենիսականի բարձրավավանդակի պայմաններում խնձորենու հիվանդություններից տարածված են քուր և թուզ ձեռվ ալրացողը (Ռենեսանս Ռեշետնիկովի), իսկ վնասատուններից՝ պտղակերը, խնձորենու ցեցը, օղակավոր մետաքսագործը, կանաչ լվիճը, գորշ տիզը: Տանձենու հիվանդություններից՝ քուր, վնասատուններից՝ պտղակերը, պսիլան, խնձորենու կարմիր տիզը և տերևապոլոր լվիճը: Քոսի տարածման աստիճանը կախված է տեղումների բանակից և ապրիլ-մայիս ամիսների ջերմությունից: Այսպես, 1963 թ. առատ տեղումների և օդի բարձր խոնավության պայմաններում քու հիվանդությունը բավական ուժեղ արտահայտվեց, որը զգալի վնաս պատճառեց ծառերին: Հատկապես շատ տուժեցին Աստրախանի կարմիր, Արկադ ձմեռային և Ռենեսանս Ռեշետնիկովի, տանձենու՝ Աւտառային գեղեցկունի սորտերը: Հիվանդությունների և վնասատունների նկատմամբ իրենց համեմատական դիմացկունությամբ աշքի են ընկել խնձորենու Օլեդ, Պելին Զերնենկո և տանձենու Լեռնային գեղեցկունի ու Մալաշա սորտերը:

ОГАНЕСЯН Г. Г.

АГРОБИОЛОГИЧЕСКОЕ ИЗУЧЕНИЕ НЕКОТОРЫХ НОВЫХ СОРТОВ ЯБЛОНИ И ГРУШИ В УСЛОВИЯХ ЛЕНИНАКАНА

В работе приводятся результаты агробиологического изучения некоторых новых сортов яблони и груши.

В процессе изучения освещаются вопросы сроков созревания плодов, урожайности, вкусовых достоинств, химического состава и лежкости.

Срок созревания плодов является важной биологической особенностью сорта, определяющей распространение и характер использования сорта. По срокам созревания сорта подразделяются на летние, осенние и зимние.

Урожайность является одним из главных биологических и хозяйственных качеств, определяющих производственную ценность сортов. Среди изучаемых сортов по урожайности отличались: из яблонь — Астраханское красное, Пепин Черненко и Бисмарк; из груш — Елена, Горная красавица.

Длительность лежкости сортов яблони колеблется от 10 до 220 дней. В обычных плодохранилищах плоды яблок сортов Бисмарк, Пепин Черненко хранятся до апреля, а из груш — 70 дней хранились плоды сортов Елена, Ленинаканская поздняя. По предварительным данным, по показателям хозяйственно-полезных признаков отличались сорта яблони — Астраханское красное, Папировка, Бисмарк и Пепин Черненко; сорта груши — Елена, Ленинаканская поздняя, Горная красавица и Бере-Аманли, которыми

можно заменить или пополнить стандартный сортимент высокогорных зон плодово-ягодных культур.

По данным учетов пораженил болезнями и повреждения сельскохозяйственными вредителями установлено, что среди изучаемых сортов яблони поражаемость грибком парши значительно больше наблюдалась у Астраханского красного, Аркада зимнего, Ренета Решетникова; из сортов груши — у Лесной красавицы. Из вредителей были обнаружены плодожорка, яблоневая моль, колчатый шелкопряд, бурый плодовый клещ, зеленая яблонная тля, а на сортах груши — медяница, грушевая тля, листокрутка.

Небольшая поражаемость плодожоркой была обнаружена у сортов Ренет Решетникова, Бисмарк и Астраханское красное; значительно сильнее — у сортов Флава, Титовка, Кальвиль анисовый. Бурым плодовым клещиком заражены все сорта яблони, относительно слабо — Олег и Кальвиль анисовый.

Учеты на сортах груши показали, что медяница гораздо больше повреждает Джир-надри и Кзл-армуд.